Կարգապահական գործ թիվ ԿԳ-18195

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019թ-ի ապրիլի 10-ի թիվ 64-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԿԳ/37-Ա

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 13. 02.2019 թ. թիվ ԿԳ/19-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՎՐԻՊԱԿՆ ՈՒՂՂԵԼՈՒ) ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քննության առնելով փաստաբան «Վիկտորյա Օհանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» Պալատի խորհրդի 13. 02. 2019թ. թիվ ԿԳ/19-Ա որոշման մեջ տեղ գտած վրիպակն ուղղելու մասին հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 10.12.2018թ. թիվ 463-Ա/ԿԳ-18195 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

Պալատի խորհուրդը 19. 02. 2019թ. կայացրել է «Փաստաբան Վիկտորյա Օհանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հարցը քննարկելու» թիվ ԿԳ/19-Ա որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որով կարճել է փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ փաստաբանի նկատմամբ «Փաստաբանների վերապատրաստման» կարգի 30.1 կետով սահմանված արտոնությունը կիրառելու հիմքով:

Որոշման 1-ին և 2-դ էջերում «Պատասխանողի համառոտ բացատրությունը» գլխում թույլ է տրվել վրիպակ, նշվել է «20.12.2018թ. Պալատ մուտքագրվել է փաստաբան Վիկտորյա Օհանյանի դիմումը, որի համաձայն Վիկտորյա Օհանյանը պարտավորվում է հաշվետու կիսամյակում չանցած վերապատասրատման դասընթացների ժամերն իր հաշվին լրացնել հաջորդ կիսամյակում և խնդրում է այդ

հիմքով իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել», մինչդեռ փաստաբան Վիկտորյա Օհանյանի կողմից ներկայացրած բացատրությունը այլ բովանդակության է եղել, այն է՝ «20.12.2018թ. Պալատ մուտքագրել է փաստաբան Վիկտորյա Օհանյանի դիմումը, որով վերջինս խնդրել է կարճել իր նկատմամբ 2018թ. առաջին կիսամյակին վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը՝ հաշվի առնելով առնելով այն հանգամանքը, որ վերջինս հանդիսանում է Երևանի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ: Դիմումին կից ներկայացրել է տեղեկանք՝ ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունից»:

Որոշման 2-րդ էջում «Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ» գլխի 4-րդ կետում թույլ է տրվել վրիպակ, նշվել է՝ **«Փաստաբան Վիկտորյա Օհանյանը պարտավորվել է հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում: Նշված փաստը հաստատվում է 20.12.2018թ. դիմումով:»,** մինչդեռ անհրաժեշտ էր նշել՝ **«Փաստաբան Վիկտորյա Օհանյանը հանդիսանում է Երևանի պետական համալսարանի դասախոս: Նշված փաստը հաստատվում է Երևանի պետական համալսարանի անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության 20.12.2018թ. տեղեկանքով:»**

Որոշման 3-րդ էջում «Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը» գլխում թույլ է տրվել վրիպակ, նշվել է՝

- «**Կարգի 30[1] կետի համաձայն՝ եթե փաստաբանը գրավոր դիմում (այդ թվում էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացնում Պալատին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում, ապա՝ ... վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:»**, մինչդեռ անհրաժեշտ էր նշել՝ **«Կարգի 29-րդ կետի համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատը կարգապահական պատասխանատվության չի ենթարկում վերապատրաստամանը չմասնակցած... պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսներին՝ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում»:**
- «**Սույն կանոնից բացառություն է կազմում այն դեպքը, երբ փաստաբանի նկատմամբ նախկինում վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել, և փաստաբանը Պալատին գրավոր դիմում է ներկայացնում՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերմ իր հաշվին լրացնել հաջորդ կիսամյակում:»**, մինչդեռ անհրաժեշտ էր նշել՝ **«Սույն կանոնից բացառություն է կազմում այն դեպքը, երբ փաստաբանը հանդիսանում է ՀՀ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս:»:**
- **«Միևնույն ժամանակ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 13. 02. 2019 թվականի տեղեկանքն առ այն, որ նախկինում փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ**

վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել, ինչպես նաև 20.12.2018թ. Պալատ մուտքագրված դիմումը, որով Վիկտորյա Օհանյանը պարտավորվում է հաշվետու կիսամյակում չանցած վերապատասրատման դասընթացների ժամերն իր հաշվին լրացնել հաջորդ կիսամյակում:», մինչդեռ անհրաժեշտ էր նշել՝ **«Միևնույն ժամանակ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում 20.12.2018թ. Պալատ մուտքագրված դիմումը, որով Վիկտորյա Օհանյանը տեղեկացնում է, որ աշխատում է Երևանի պետական համալսարանում որպես դասախոս՝ դիմումին կցելով սույն փաստը հաստատող տեղեկանք:»:**

- **«Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, <u>կարգի 30.[1] և 30.[3] կետերի պահանջներով</u>, Պալատի Խորհուրդը Որոշեց 1. Փաստաբան Վիկտորյա Օհանյանի (արտոնագիր՝ թիվ 1522) նկատմամբ 10.12.2018թ. թիվ 463-Ա/ԿԳ-18195 որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը կարճել՝ փաստաբանի նկատմամբ <u>«Փաստաբանների վերապատրաստման» կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունը կիրառելու հիմքով</u>:»,** մինչդեռ անհրաժեշտ էր նշել՝ **«Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, <u>կարգի 29-րդ կետի պահանջներով</u>, Պալատի Խորհուրդը Որոշեց 1. Փաստաբան Վիկտորյա Օհանյանի (արտոնագիր՝ թիվ 1522) նկատմամբ 10.12.2018թ. թիվ 463-Ա/ԿԳ-18195 որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը կարճել՝ փաստաբանի նկատմամբ <u>«Փաստաբանների վերապատրաստման» կարգի 29-րդ կետով սահմանված արտոնությունը կիրառելու հիմքով</u>:»**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Որոշման մեջ նախատեսվում է կատարել ծավալուն փոփոխություններ՝ Պալատի Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ուղղել Որոշման մեջ թույլ տված վրիպակները՝ Որոշումը շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Վիկտորյա Օհանյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

10 ապրիլ 2019թ.
թիվ ԿԳ/37-Ա
ք. Երևան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
10.04.2019թ. թիվ ԿԳ/37-Ա որոշման

«

Կարգապահական գործ թիվ ԿԳ-18195

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի փետրվարի 13-ի թիվ 32-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԿԳ/19-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԻԿՏՈՐՅԱ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(նոր խմբագրություն)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վիկտորյա Օհանյանի (արտոնագիր՝ թիվ 1522) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ նաև՝ Դպրոց**) կողմից 28.11.2018թ. (մուտք՝ 29.11.2018 № 3441-18) ներկայացված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վիկտորյա Օհանյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) 2018թ.առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 10.12.2018թ. թիվ 463-Ա/ԿԳ-18195 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.8.2

ենթակետի խախտման հատկանիշներով:

14.12.2018թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի փետրվարի 13-ին, ժամը՝ 19:08-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

20.12.2018թ. Պալատ մուտքագրվել է փաստաբան Վիկտորյա Օհանյանի դիմումը, որով վերջինս խնդրել է կարճել իր նկատմամբ 2018թ. առաջին կիսամյակին վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը՝ հաշվի առնելով առնելով այն հանգամանքը, որ վերջինս հանդիսանում է Երևանի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ: Դիմումին կից ներկայացրել է տեղեկանք՝ ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունից:

Փաստաբան Վիկտորյա Օհանյանը, թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) 2018թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում Պալատի, Դպրոցի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից կազմակերպվել է 101 (մեկ հարյուր մեկ) վերապատրաստման դասընթաց:

Նշված փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի և վերապատրաստման հարցերով համակարգողի 25.01.2019թ. տեղեկանքով:

2) 2018թ-ի առաջին կիսամյակի (հունիս-հունվար (ներառյալ)) ընթացքում Վիկտորյա Օհանյանը չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

Նշված փաստը հաստատվում է Դպրոցի 28.11.2018թ. տեղեկանքով:

3) Փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով նախկինում կարգապահական վարույթ չի հարուցվել:

Նշված փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 13.02.2019թ. տրամադրված տեղեկանքով:

4) Փաստաբան Վիկտորյա Օհանյանը հանդիսանում է Երևանի պետական համալսարանի դասախոս:

Նշված փաստը հաստատվում է Երևանի պետական համալսարանի անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության 20.12.2018թ. տեղեկանքով:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 13.02.2019թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Վիկտորյա Օհանյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում նրա

նկատմամբ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) դրույթներով:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ... 4.1) սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Օրենքի 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.5 կետի 24-րդ ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը, որպես գործադիր մարմին հաստատում է փաստաբանների վերապատրաստման կարգը*:

Կանոնագրքի 2.8.2 ենթակետը սահմանում է, որ *փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Կարգի 1-ին կետի համաձայն՝ *կարգը սահմանում է փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ընթացակարգը, ժամկետները, ժամերի հաշվարկը, պատասխանատվության, հաշվետվողականության, ինչպես նաև վերապատրաստման հետ կապված այլ հարաբերությունները*:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը՝ Կարգով նախատեսված ժամկետում և ընթացակարգով, պետք է անցնի 12 (տասներկու) ակադեմիական ժամ (այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի) վերապատրաստում: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):*

Կարգի 27-րդ կետի համաձայն՝ *կարգը խախտելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով:*

Կարգի 29-րդ կետի համաձայն՝ *ՀՀ փաստաբանների պալատը կարգապահական պատասխանատվության չի ենթարկում վերապատրաստմանը չմասնակցած... պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական*

հաստատության դասախոսներին՝ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

Նշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանը պարտավոր է անցնել վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում 48 ժամից պակաս լինել, իսկ Պալատի խորհուրդը որպես գործադիր մարմին սահմանում է փաստաբանների վերապատրաստման կարգը և ժամաքանակը:

Սահմանված ժամկետում վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության: Սույն կանոնից բացառություն է կազմում այն դեպքը, երբ փաստաբանը հանդիսանում է ՀՀ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս: Այդ պարագայում փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:

Փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է այն հիմքով, որ վերջինս, խախտելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի և Կարգի 8-րդ կետի պահանջները, 2018թ. առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ 2018 թվականի հունվար-հունիս (ներառյալ) ամիսներին Պալատը կազմակերպել է 101 (մեկ հարյուր մեկ) վերապատրաստման դասընթաց (չհաշված առցանց վերապատրաստման դասընթացները): Ընդ որում, թեմաները նախապես հաստատված և տեղադրված են եղել Պալատի կայքում, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա դասացուցակները հաստատվել և տեղադրված են եղել Պալատի կայքում:

Միևնույն ժամանակ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 13. 02. 2019 թվականի տեղեկանքն առ այն, որ նախկինում փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել, ինչպես նաև Պալատի խորհուրդը հիմք է ընդունում 20.12.2018թ. Պալատ մուտքագրված դիմումը, որով Վիկտորյա Օհանյանը տեղեկացնում է, որ աշխատում է Երևանի պետական համալսարանում որպես դասախոս՝ դիմումին կցելով սույն փաստը հաստատող տեղեկանք:

Նման պայմաններում Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վիկտորյա Օհանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, կարգի 29-րդ կետի պահանջներով, Պալատի Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Վիկտորյա Օհանյանի (արտոնագիր՝ թիվ 1552) նկատմամբ 10.12.2018թ. թիվ 463-Ա/ԿԳ-18195 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանի նկատմամբ «Փաստաբանների

վերապատրաստման» կարգի 29-րդ կետով սահմանված արտոնությունը կիրառելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վիկտորյա Օհանյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

13 փետրվարի 2019թ.
թիվ ԿԳ/19-Ա
ք. Երևան »